

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 բուբուն, կէս տարվանը 6 բուբուն:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թվով ընդհանուր գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(*) Խմբագրատանը գրվում են ուղղակի
Тифлисте. Редакция „Мелк“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նախի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն շաբաթով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեզ մեղադրել չէ կարող. — Եւրոպէի տե-
սու թիւն: Մի նկատողութիւն: Կենդանիների
հոգնաւորութեան ընկերութիւնը: Նամակ բա-
ղուց: Եւրոպէի ուրբեր: — Արտաքին տեսու-
թիւն: Տարածութիւնը ստորոտէն ձայն: — Մշակիչ հե-
ռագիրներ: — Յայտարարութիւններ: — Բանասի-
րական: Խննդը:

ՄԵԶ ՄԵՆԱԴՐԵԼ ԶԷՔ ԿԱՐՈՂ

Այն լուրը, որ մեր տեղական
հայ լրագիրներին արգելեցաւ
թիւրքաց տէրութեան կողմից
թիւրքիայի սահմանի մէջ մտնելը,
պաշտօնապէս ստոյգ յայտնվեցաւ:

Մենք մեր ուրիշ պարբերական
հրատարակութիւնների կողմից
խօսել իրաւունք չունենք. — Թող
նրանք իրանք իրանց արդարաց-
նեն, — բայց «Մշակի» կողմից մենք
կարող ենք վկայել, որ եթէ մենք
ուրթ տարի շարունակ յարձակ-
վում էինք թիւրքաց կառավարու-
թեան դէմ, մենք այդ արել ենք
նախ ոչ թէ իրան Սուլթանի
անձնաւորութիւնը վերաւորելու
համար, ինչպէս այդ սովորութիւն
ունեն անել թիւրքաց լրագիրները

Ի Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՅԵՆԻ ՎԵՐՁԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱՎԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԺԷ.

Բոլորովին մութն էր, երբ Հայրապետը և Սա-
ռան վերադարձան տուն: Նրանք իմացան, որ Թո-
մաս Էֆենդին վարդանի հետ ունեցած անբաւա-
կանութիւնից յետոյ դժգոհութեամբ հեռացել էր
իրանց անից, և ծերունի խաչօն այդ մասին շատ
անհանգիստ էր, վախճալով, մի գոցէ կապալա-
ռուն իրանց համար մի չար որոգայթ լարէ:

Բայց վարդանը, չը նայելով իր դիւրբորբոյրը և
դիւրազորութեանը, անբան անբաղա-
քալարի չէր, որ իրուր տեղը անպատէր մէկին
նա համարում էր Էֆենդուն մի գարշելի մարդ, որ
թուրք կառավարութեան ներկայացուցիչների ձեռ-
քում գործիք դարձած, ծծում էր իր համազգիների
արիւնը, հարստահարում էր և աղքատացնում էր
նրանց: Բայց դրանցից, նրան յայտնի էր կապա-
լառուի անցեալը: Այդ մոլաշնչիկ խաբեան մի
և նոյն պաշտօնով եղել էր Հայաստանի շատ կող-
մերում, և իբրեւ, շատ տեղերում պակկիւլ էր,
իր կնիքներին թողել էր և շատ տեղերում խել-
քից հանել էր անմեղ աղջիկներին: Այժմ մի և
նոյն կեղտոտ նպատակներն ունէր և լալայի վե-
րաբերութեամբ, և օգուտ քաղելով նրա հօր միա-
մտութիւնից, կամենում էր մի զգուշիկ դեր խա-
ղալ: Այդ, ի հարկէ, տանել չէր կարող վարդանը:

օտար պետութիւնների թագա-
ւորների դէմ, երկրորդ՝ մեր ա-
սածները մեր գլխից հնարած, ե-
րեակայական փաստերի վրա հիմն-
ված չէին, այլ հաստատ իրողու-
թիւնների վրա, որոնց մենք քա-
ղում էինք նոյն իսկ թիւրքաց,
մեծ մասամբ պաշտօնական աղ-
բիւրներից:

Բաւական է յիշել այստեղ
«Մշակի» վերջին երկու տարիսե-
րի ամենանշանաւոր յօդուածները:
Փաստերը մենք առնում էինք
հաստատ և նոյն իսկ թիւրքիա-
յում հրատարակված աղբիւրնե-
րից, իսկ մեր սեփական յօդուած-
ները, մեր դատողութիւնները՝
միայն հետևանք էին այդ մեծ
մասամբ պաշտօնական աղբիւրների:
Սկսենք 1877 թւի «Մշակի»
համարներից և յիշենք այստեղ
ամենանշանաւոր և աչքի ընկնող
յօդուածները: Այդ թւականի
«Մշակի» № 5 մէջ մենք արտա-
տպեցինք Կ. Պօլսում հրատարակ-
վող «Մանգուլէի Լիֆթեար» լրա-
գրից մի յօդուած, որ նկարագրում
էր թիւրքաց Հայաստանի թը-
շուառ և հարստահարեալ դու-
թիւնը: «Մշակի» № 13 մէջ մենք

արտատպեցինք Կ. Պօլսի «Եւրո-
պար» լրագրից մի յօդուած «Հա-
յոց ժողովրդի տանջանքներ» վեր-
նագրով, նոյն համարում կար և
մի նամակ Վանից, արտա-
տպված «Մանգուլէի Լիֆթեար»
լրագրից: Մեր թերթի № 31
մէջ ընթերցողները կարդացին մի
նամակ Վանից որ առնված լինե-
լով «Մանգուլէի Լիֆթեար» լրա-
գրից, նկարագրում էր թիւրքաց
Հայաստանի բրիտանաց ազգա-
բնակութեան թշուառ և հարս-
տահարեալ դութիւնը: Այդ նա-
մակներից շատերի մէջ նկարագր-
ված էր թէ թիւրքաց տէրու-
թիւնը և թիւրք զինուորները ի-
րանք կրակ գցեցին Վանի մէջ,
դիտմամբ այրեցին այդ հայաբնակ
քաղաքը և այլն: Նոյն 1877 թւի
«Մշակի» 55—58 համարների
մէջ տպվեցաւ ականատես հե-
ղինակի յօդուածների մի շարք,
որտեղ նկարագրված էին ամենա-
սարսափելի բարբարոսութիւններ և
հարստահարութիւններ, որ թիւր-
քերը և քիւրդերը գործում էին
Հայաստանում:

Նոյն թւին հրատարակեցան

նին: Առում են, սրտերի մէջ մի գաղտնի ճանա-
պարհ կայ: Այդ երկու երկրասարգները կարճ
խօսակցութիւնից յետոյ մտերմացան, և որպէս մի
գաղտնի աղանդի պատկանող երկու անդամներ,
առանց նախապէս միմեանց հետ ծանօթ լինելու,
եղբայրական ձեռք մեկնեցին միմեանց: Վարդա-
նը նրան վեր առաւ և բերեց ծերունի խաչօի
տունը:

Նոր հիւրը իրան կոչում էր Միքայէլ Գուգուկ-
չեան: Որպէս տաճկաստանցի բոլոր տոհմաւոր-
ները առած են լինում հօր կամ պապի արհես-
տից, պարոնի հայրն էլ դուռուկներ է շինելու ե-
ղել, այսինքն մի տեսակ չլինելով, որ երեխաները
ածում են: Խակապէս ծերունի խաչօին շատ դուր
չէկաւ ոչ նրա տոհմաւորը, որ դուռուկութեամբ
էր արտասանում, ոչ նրա հիւանդոտ և գունաթափ
դէմքը, ոչ նրա անհանգիստ աչքերը իրանց տես-
դային փայլով, և ոչ էլ նրա միջին ու ծածկամիտ
բնաստութիւնը, որ իսկոյն կասկած էր յարուցա-
նում: Բայց վարդանը ծածուկ ասել էր ծերու-
նուն, թէ զայն տղայ է, երբ ծանաչես, կը սիրես
դրան:

Մտնելով ծերունի խաչօի տունը, անծանօթ
հիւրը միայն մի բան հարցրեց վարդանից.

— Կարելի է հաւատալ զրանց...

— Կարելի է... պատասխանեց վարդանը:

Երբ օղակի մէջ ճրագը վառվեցաւ, դիւղական
սովորութեան համեմատ, իսկոյն ընթերցեց տուեցին:
Այս գիշեր սեղանակից էին ծերունի հօր հետ նրա
բոլոր վեց որդիները, որովհետեւ Թոմաս Էֆենդին
այնտեղ չէր, և մի ուրիշ բարձրաստիճան հիւր չը
կար, որի պատճառով որդիները համարձակութիւն
չունենալով սեղան նստելու: Վարդանը տան տղայ
էր համարվում, իսկ նոր հիւրը վրա նայում էին
որպէս մի մարդու վրա, որ այնքանով ևս գոհ
պէտք է լինէր, որ այս գիշեր կուշտ փորով հաց
էր ուտելու:

Կ. Պօլսի մէջ հայոց նախկին
պատրիարք Խրիմեան հայրիկի եր-
կու բրօշուկներ, որոնցից «Վան-
դոյթ» բրօշուկը ամենանշանաւորն
է, և որ նկարագրելով հայերի
տանջանքները, և թիւրքերի գոր-
ծած բարբարոսութիւնները, պարզ
մեղադրում է թիւրքաց կառա-
վարութիւնը թէ նա է կրակ
տուել Վան քաղաքը և այն միտքն
է յայտնում թէ ճշնշելով, ոչնչաց-
նելով հայերի պէս իր ամենահա-
ւատարիմ հպատակ ազգութիւնը,
թիւրքաց կառավարութիւնը բա-
ղաբական անձնասպանութիւն
է գործում, որովհետեւ ոչնչացնում
է իր կենսական աղբիւրը, իրան
պահող, իրան կերակրող, աշխա-
տասէր ազգութիւնը:

Բացի այդ բոլոր աղբիւրներից
մեր դատողութիւնները հիմնվում
էին միշտ այն բազմաթիւ յօ-
դուածների և թղթակցութիւն-
ների վրա, որոնք սփռված էին
բոլոր եւրօպական և ուսուսաց թէ
մայրաքաղաքի և թէ տեղական
լրագիրներում: Իսկ այդ թղթակ-
ցութիւններն ու յօդուածները,
միշտ հիմնվում էին պաշտօնական

Ընթերցի ժամանակ խիստ տխուր անցաւ: Վար-
դանը և նոր հիւրը համբաւ չէին խօսում: Իսկ
ծերունին նոյնպէս խիստ հալու անգամ խօսք էր
փոխում իր որդիների հետ: Սեղանակիցների սըր-
տերը լցված էին զանազան տեսակ, միմեանցից
տարբեր ցաւերով: Ծերունին կապալառուի վրա
էր մտածում, թէ նա դժգոհութեամբ հեռացաւ իր
անից: Հայրապետը զբաղված էր քրդի բէկով և
Լալայի վիճակով: Նա կրկին միտքն էր բերում
Սառայի պատմութիւնը և մտածում էր, թէ ինչ
պէտք է անել: Ծերունու միւս որդիները մտա-
ծում էին իրանց մեղաւորութիւնների վրա, թէ առա-
ւօտեան ով ինչ գործ պէտք է կատարէ: Վար-
դանի գլխի մէջ պտտվում էր Լալայի գեղեցիկ
ուրուականը: Իսկ նոր հիւրը, Աստուած դիտէ, թէ
ինչ բանի վրա էր մտածում...

Երբ սեղանը հաւաքեցին, Ստեփանիկը բերեց
լիքիլը և լազանը, իր ձեռքով ջուր ածեց, և տե-
ղային սովորութեան համեմատ, նրանք լուսացին
իրանց ձեռքերը: Գոհացան և փառք տուին Աս-
տուծուն: Ծերունին սկսեց ծխել իր երկայն չիբուխը,
իսկ պ. Գուգուկչեանը հանեց իր ծոցից մի գեղե-
ցիկ պօրտսիգար, որ ամենին չէր համապատաս-
խանում նրա համառ հաղուստին, և զօրք բերե-
լով նրա մէջից մի թանկագին սիգար, երկար ե-
ղունգներով ծայրը կտրեց, և սկսեց ծխել: Փոք-
րիկ սենեակը լցվեցաւ հաւանեան ծխախոտի ա-
նուշոտութեամբ: Երկուսն էր, որ այդ մարդը մի
ժամանակ զուրկ չէ եղել կենքի վայելչութիւննե-
րից, իսկ այժմ հանգամանքները ձգել էին նրան մի
տարօրինակ կենքի մէջ:

Ընթերցից յետոյ խօսակցութեան առարկան Թո-
մաս Էֆենդին էր: Վարդանը մանաւորապէս
պատմել էր պ. Գուգուկչեանին այդ մարդու մա-
սին, և այդ պատճառով խօսակցութեան առար-
կան նրան բաւական ծանօթ էր: Ծերունի խաչօն
խիստ քաղաքավարի կերպով նկատեց վարդանին,

տեղեկութիւններ լրա, օրինակ
Կ. Պօլսի հայոց ազգային ժողովի
գեղուցումների և հայոց պատ-
րիարքի պաշտօնական բողոքների
վրա: Բաւական է յիշել այստեղ
„Тифл. Вѣстн.“ լրագրում 1876
թիւին տպւած մի շարք յօդուած-
ների, որոնք հիմնւած էին Կ.
Պօլսի հայոց պատրիարքարանի և
ազգային ժողովի պաշտօնական
բողոքների վրա և հետեւեալ տարի-
ների „Голосъ“ լրագրի հարուստ
թղթակցութիւնները թիւքաց
հայերի թշուառ դրութեան մասին,
որոնք իրանց տեղեկութիւնները
նոյնպէս առնում էին պաշտօնական,
ամենահաստատ աղբիւրներից:

Աւերորդ ենք համարում յիշել
այստեղ այն բոլոր բարբարոսու-
թիւնները, որ գործում էին թիւք-
քերը, բիւրդերը և չերկէզները
ռուս-թիւքաց պատերազմի ժա-
մանակ... Երանց այդ բարբարո-
սութիւնների նկարագրութեամբ,
որ գործում էին թէ հայերի և
թէ իրանց այլ հպատակ ազգու-
թիւնների վերաբերութեամբ, լի
էր ամբողջ աշխարհի մամուլը:

«Մշակի» 1878 թիւի բոլոր
յօդուածներից մենք կը յիշենք
միայն Մէլքեդազէի յօդուածնե-
րի մի շարք «Տեղեկագիրք» վեր-
նագրով (№ № 145—150): Այդ
յօդուածների բոլոր տեղեկութիւն-
ները, հայոց ազգի վրա թիւք-
կառավարութեան կողմից գոր-
ծած ճնշումները, բարբարոսու-

թիւնները, վայրենութիւնները՝ ա-
ռնւած էին Կ. Պօլսի հայոց
պատրիարքարանի պաշտօնական
գեղուցումներից:

Հետեւեալ 1879 թիւին հրա-
տարակցեցաւ «Մշակի» մէջ Պրի-
գոր Արծրունու դատախօսութիւ-
նը, որ յետոյ թարգմանւեցաւ
գերմաներէն լեզուով և շուտով
լոյս կը տեսնի Մօսկւայում ա-
ռանձին բնօրինակով ռուսերէն
լեզուով: Այդ գրութեան բոլոր
տեղեկութիւնները, որոնք վերա-
բերվում են բիւրդերի և թիւքքե-
րի վարմունքին հայերի հետ, նոյն-
պէս առնւած են հայոց պատ-
րիարքարանի պաշտօնական տե-
ղեկագիրքներից: Նոյն թիւին մենք
կարողացանք ձեռք բերել նոյն
խակ Կ. Պօլսում Փրանսիերէն լե-
զուով հրատարակւած «L'article
61» վերնագրով երկու թէ երեք
կարմիր տետրակներ, որոնք ամփո-
փում էին իրանց մէջ Հայաստա-
նի զանազան կողմերի հայ ա-
ռաջնորդներից Կ. Պօլսի պատ-
րիարքարանի մէջ ստացւած, հա-
յերի վրա գործված, զանազան
անարդարութիւններ, հարստահա-
րութիւններ և բարբարոսութիւն-
ներ նկարագրող պաշտօնական հե-
ռագիրներ:

Վերջապէս յիշենք այստեղ և
«Մշակի» ներկայ 1880 թիւի ա-
ռաջին համարներում տպւած
Վահան Վ. Պարտիզակցու Լորդ-
րումի անգլիական հիւպատոս

հրատարակած ներկայացրած գեղու-
ցումները (№ № 21—24):

Եւ պէտք է ասել, որ մենք
յիշում ենք այստեղ աղբիւրներից
ամենագլխաւորները միայն... Թող
թիւքաց կառավարութիւնը կար-
գայ այդ բոլոր գրութեանը, ո-
րոնք նոյն խակ թիւքքիայում հրա-
տարակցեցան, որոնք ներկայաց-
նում են ճշմարիտ ազգի յուսա-
հատված, օրհասական աղաղակը
և որոնց մենք արտատպեցինք
կամ որոնցից մենք միայն օգուտ
քաղեցինք, առանց մեզանից ո-
չինչ աւելացնելու, հիմնեցինք մեր
բոլոր դատողութիւնները թիւք-
քիայի վերաբերութեամբ:

Ինչի, ուրեմն, թիւքքաց կա-
ռավարութիւնը մեզ է մեղա-
դրում, ինչի է արգելում նա մեր
լրագրի մուտքը իր պետութեան
սահմանների մէջ, երբ մեր բոլոր
ասածներից և ոչ միւր հնարած
իրողութիւն չէ, այլ եղել է միայն
այն յուսահատական աղաղակի
արձագանքը, որ նոյն խակ թիւք-
քիայի հողի վրա ծնունդ առաւ,
որ անդադար մեր ականջներին
էր համուռ, բղբերով թիւքքիա-
հպատակ հայի ճնշված կուրծ-
քից...:

Մենք միայն թարգման եղանք
մեր համարին եղբայրների ա-
ղաղակների և այժմ թիւքքիան
կամենում է մեզ, ռուսահպատակ-
ներին արգելել ձայն հանելու,
կամ գոնէ կամենում է արգելել

որ մեր ձայնը չը կարողանայ
հասնել Բ. Դրան հպատակ ճնշ-
ված, ոռնակոխ արած հայերի ա-
կանջին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Ներկայ տարվայ «Փորձի» I տետրակի ըս-
կըրում տպած է պ. Պատկանեանի պատուա-
կան յօդուածը—Համառոտ տեսութիւն
հայ պատմական գրականութեան
վերնագրով: Դիտեալեան հեղինակը այդ յո-
դուածի մէջ յառաջ է բերում 'ի միջի այլ-
մի համառոտ ցուցակ զանազան տեղերի, ու
գտնվում են հայկական ձեռագիրներ շա-
կամ քիչ քանակութեամբ: Այդ ցուցակը չէ
'ի հարկէ, լիակատար, և ինքն հեղինակն է
անշուշտ այդպէս է համարում դրան, որպէ-
ս այդ պարզ երևում է և յօդուածի վերջաբա-
նութիւնից: Վասն որոյ աւելորդ չեմ համա-
րում աւելացնել այդ ցուցակի վրա իմ ունե-
ցած տեղեկութիւնները, հրաւիրելով մե-
քանակներին հետզհետէ լրացնել այդ ցու-
ցակը, որ մեծ նշանակութիւն ունի ազգային
մատենագրութեան զարգացման համար:

Պ. հեղինակը ցոյց է տալի Փարիզի ազգա-
յին մատենադարանի մէջ (Bibliothèque Natio-
nale) հայոց ձեռագիրների թիւք 260: Ին-
քս 1877 թ. հինգ ամիս շարունակ պարա-
պելով այդ մատենադարանի մէջ 'ի միջի այ-
լոյց և հայոց ձեռագիրների հետազոտութիւ-
նով, դոցա թիւք դոցա 273, ուրեմն 13 ձե-
ռագրով աւելի: Արարատի մէջ (1878 թ.
փետրվար) ես տպեցի իր ժամանակ Փարիզի
ուղարկած թղթակցութեամբ մի յօդուած
այդ մատենադարանի հայկական ձեռագիրնե-
րի մասին բաւական ընդարձակ տեղեկութիւն
ներով, ուր ցոյց տուած եմ ոչ միայն դոցա
թիւք, այլ և բովանդակութիւնը ըստ զանա-
զան գիտութիւնների և զբաղւածութեան թը-
ւականները, որքան այդ յայտնի էր յիշատա-
կարաններից:

Թէ նրա այն օրվայ վարմունքը էֆէնդու հետ ան-
խոնհում էր:

—Ես, ասաց նա,—դու գիտես, որ քեզ չեմ ջո-
կում իմ այս եօթն օրդիներից, նա ցոյց տուեց
վեց օրդու վրա, որ նստած էին և Ստեփանիկի
վրա, որ կանգնած էր:

Երբեմնին սովորութիւն ունէր միշտ եօթն օր-
դիների անուշով խօսել և նրանց անուշով երգել,
Ստեփանիկին ևս նրանց հետ հաշուելով, բայց չը
գիտէր, որ Վարդանին վարդուց արդէն յայտնի էր
Ստեփանիկի աղբիւր լինելը:

—Այս եօթը օրդիներն արեւը թող վկայ լինի,
եթէ սուտ լինեմ ասելու, շարունակեց նա,—դու
էլ իմ օրդիքն ես իմ տունը քո տունն է, գալիս
ես, քնում ես, և որքան սիրով ուզում է, մնում
ես: Իմ դուռը քո առջև միշտ բաց է: Բայց պէտք
է գիտենաս, որ այստեղ ուրիշ երկրների նման
չէ, այստեղ թօմաս էֆէնդու նման մարդիկ՝ մեծ
մարդիկ են, շատ մեծ մարդիկ... նրանք ինչ որ
կամենան, կարող են կատարել: Այս պատճառով,
նրանց պէտք է ակամայ յարգել և երբեմն նրանց
խօսքերի ու արարածքների մասին պէտք է լը-
ռել... Ինչ կարող ենք անել: Մի չարագործի
ձեռք, ասում է առակը, եթէ չես կարող կտրել,
պէտք է համբուրես և զլխիդ վրա դնես: Իֆէն-
դին, կարելի է, քեզ մի միտա չը կարողանայ հաս-
ցնել, որովհետեւ այստեղացի չես, բայց մենք քո
փոխարէն պիտի տուծենք նրա հասցրած միտքը:
Դու խօսել ես թուրքի առածը. «չէլից վախեցաւ»
և սկսեց փախանիս ծեծել...:

Երբեմնու խօսքերը կրկին հաւաքեցին խենթի
իծանքը *): Նա պատասխանեց.

—Թուրքերի վերաբերութեամբ մեր կողմի հա-
յերը մի լաւ առած ունեն, ասում են՝ «թուրքին

մինչև չը ծեծես, բարեկամ չի դառնայ»: Ես թո-
մաս էֆէնդուն թուրքերից չեմ դանդաղանում, և
շատ ցաւում եմ, թէ ինչու նրան մի լաւ չը ծե-
ծեցի, թէ և նրա բարեկամութիւնը ինչ շատ հա-
ճելի չէր կարող լինել:

Երբեմնու երեսի խորշումները աւելի կնճռե-
վեցան, երեսում էր պատասխանը նրան, դիւր չե-
կաւ խակ Ստեփանիկի գէմբի վրա փայլեց մի
պայծառ ժպիտ, որը չէր կարող չը նկատել Վա-
րդանը: Նա դեռ կանգնած էր ոտքի վրա, և որ-
պէս տան փոքրիկը, սպասաւորութիւն էր անում:
Վարդանը հիացմունքով նայեց նրա վրա, մի և
նոյն ժամանակ նրա մտքից անցան այս խօսքերը.
«Ես միակ արարածը այս տան մէջ, որ համա-
կրում է ինչ... որովհետեւ նա միայն է, որ զգա-
ցել է այդ գարշիկ մարդու լրբութիւնը»...:

—Դուք ինքներդ թող էք տալիս այս տեսակ
ցած, անբարոյական, անիրաւ մարդերին բռնաձա-
կեղ վրա, շարունակեց Վարդանը աւելի տաք կեր-
պով.—որովհետեւ նրանց բոլոր չարագործութիւն-
ների առջև աչքներդ փակած, համբերում էք: Ես
հասկանում եմ, երբ Թուրքը, քուրդը հային հա-
րստահարում է, ճնշում է, և նրա կենսական
բոլոր ուժերը խլելով նրանից, մահացնում է:—
Ես այդ հասկանում եմ, և մինչև անգամ բնական
եմ համարում, որովհետեւ նրանք զարբերով այսպէս
վարվել են հայի հետ և նոյն կերպով շարունա-
կում են: Այդ դարձել է թուրքի և քուրդի հա-
մար մի տեսակ կենսական պահանջ, առանց որին
նրանք հաղել թէ կարող են ապրել: Բայց երբ որ
հայը վարվում է իր համազգիների հետ աւելի
փառթար, քան թէ թուրքը և քուրդը, այդ եղեւ-
նագործութեանը դժուար է համբերել: Ես այս
խօսքերը էֆէնդու երեսին ասեցի, և նա մի բառ
ևս չը գտաւ պատասխանելու:

—Ես դրանից վատը կասելի նրան, խօսակցու-
թեան մէջ մտաւ Հայրապետը,—բայց հայրս միշտ

մեզ խրատում է, թէ պէտք է լուռ մնալ. թէ
պէտք է զգուշ լինել... մի օր ազատութիւն կը լինի
մեզ... պէտք է համբերել... չը գիտեմ, մինչև երբ
պէտք է համբերել...:

—Մինչև Գիսուն Գրիստոսի դպրատուն... հեգ-
նորէն պատասխանեց Վարդանը.—բայց, ափսոս,
մինչև այն ժամանակը աշխարհի երեսին մի հայ
էլ չի մնալ, որ իր ազատութիւնը տեսնէ. բոլորը
քուրդ կամ թուրք դարձած կը լինեն...:

—«Համբերութիւնը կեանք է»... խօսեց ծերու-
նին քարոզի ոճով.—Մեր տէրտէրները, մեր վա-
րդապետները միշտ այդ են քարոզում մեզ: Ախար
մի օր կը լինի, որ Աստուած կը մտաբերէ իր
կորուստեալ ոչխարներին... Պէտք է համբերել, դա-
ւանել... համբերութիւնը կեանք է»...:

—Համբերութիւնը մահ է... պատասխանեց
պ. Դուրդուկեանը, որ մինչև այն ժամանակ չէր խո-
սում և լուռ լուռ էր նրանց վիճաբանութիւնը:
Երիտասարդի գունատ դէմքը այժմ բոլորովին դե-
ղին և նրա նուրբ, նոյնպէս գունաթափ շրթուն-
քը սկսեցին դողդողալ:

—Համբերութիւնը մահ է... կրկին նա վրդով-
ված ձայնով,—գերեզմանի մէջ միայն մարդը սո-
վորում է համբերող լինել... Մի այսպիսի հիւ-
կան համբերութիւնը, որ ունենք մենք, տանում է
դէպի անդառնալի կորուստ: Հրեաները շատ համ-
բերեցին, աշխարհի բոլոր հալածանքներին դիմա-
ցան, սպասելով, թէ կը յայտնվի մի Մեսիա, որ կը
վերանորոգէ սուրբ Երուսաղէմը և կը վերական-
գնէ Իսրայէլը հին փառքը... և մինչև այսօր սպա-
սում են... Բայց մենք մի այսպիսի ակնկալու-
թիւն ևս չունենք, չը գիտեմ, էլ ինչ բանի ենք
սպասում...:

—Մեր տէրտէրները, մեր վարդապետները հա-
մբերութիւն են քարոզում... շարունակեց նա ա-
ռաջվայ մաղձոտ ձայնով.—Ախար նրանք քանդե-
ցին մեր տունը և այս ստրկական վիճակին հա-
ս-

ցրին մեզ: Եթէ կայ մի բան, որ կարող է փրկի
հարստահարված և ճնշված ժողովուրդներին, ո-
չէ—բողոքը, ինչ կերպով և յայտնվելու լինի
նա: Գոգոնութիւնը, տրտմանը և իր վիճակից
աւելի բարեբախտ վիճակի ցանկանալը—«հաւա-
քի կարար շարժանքները, որ կարող են մեզ
զատել ստրկութենից, Բայց համբերութեան մի
խեղդվում են, մահանում են այս տեսակ բար-
ձգումները...:

Երբեմնին ոչինչ չը պատասխանեց: Վարդան
և Հայրապետը բռնեցին երիտասարդի ձեռքը
բարեկամաբար սեղմեցին: Երբեմնու միւս օր
ները ոչինչ չը հասկացան և իրանց մտքում ա-
ցին—«հաւա մի ուրիշ խենթ ես...:

Երբեմնին հրամայեց հիւրերի համար քննե-
լու պատրաստեն, իսկ ինքը օրդիների հետ, բ-
գիչեր մաղթելով, հեռացան: Տան հարսներից մի
երեսը կալած, եկաւ անկողինները պատրաստ
Օղայի մէջ ճորգը դեռ վառվում էր: Երբ
հիւրերը իրանց անկողիններում երկար անց-
մնացին: Պարոն Դուրդուկեանը կրկին վառեց
կիսատ մնացած սիգարը և սկսեց ծխել: Վարդ-
նը նկատեց նրան.

—Բարեկամ, ձեր լեզուն անհասկանալի է. դ-
հագիլ թէ կարող կը լինէք այստեղ մի գործ
նել... Ժողովրդի հետ խօսելու համար պէտք
հարկւրաւոր առակներ և առածներ գիտենալ:
Գրիստոս իր առակներով աւելի գործ չի
քան թէ բարձր, վերացական քարոզներով:

—Այո, ես չը սովորեցի ժողովրդի լեզուն
պատասխանեց պ. Դուրդուկեանը և լռեց:

(Կը շարունակվի)

*) Իծանքի փոխարենական մտքով դեի կամ
չար օգնելին նշանակութիւն ունի ռամիկ ժողո-
ւորի լեզուով:

ԽՍՀՄ-ում — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

